ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2018թ. հունիսի 20-ից 23-ը Աստանայում (Ղազախստանի Հանրապետություն)՝ բնապահպանության նախարարի տեղակալ Գնել Սանոսյանի գործուղման վերաբերյալ

1. **ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ**

   Գնել Սանոսյան

2. **ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ**

   Բնապահպանության նախարարի տեղակալ

3. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏԸ**

   Աստանա (Ղազախստանի Հանրապետություն)

   2018թ. հունիսի 20-ից 23-ը

4. **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ**

   ՄԱԿ-ի Եվրոպական տնտեսական հանձնաժողովի քարտուղարություն (UNECE)

5. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ**

   Անտառային լանդշաֆտների վերականգնման, ինչպես նաև Կովկասում և Կենտրոնական Ասիայում Բոննի մարտահրավերների նախարարական կլոր սեղանի հանդիպում

6. **ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ, ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ**

   Հանդիպման ընթացքում քննարկվեցին հետևյալ հարցերը.

- Կովկասում և Կենտրոնական Ասիայում անտառային լանդշաֆտների վերականգնման հնարավորությունները՝ Բոննի մարտահրավերի ներքո,
- անտառային լանդշաֆտների վերականգնման տարածաշրջանային և ազգային փորձի փոխանակման հնարավորությունները,
- անտառային լանդշաֆտների վերականգնման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների հասանելիությունը,
- վերականգնման առաջընթացի վերաբերյալ հաշվետվությունների ներկայացման գործընթացը,

- վերականգնման տարածքների ընտրության հնարավորությունն, ինչպես նաև մոնիտորիգը:

Բարձրաստիճան հատվածի հանդիպման ընթացքում քննարկվեցին անտառային լանդշաֆտների հնարավոր վերականգման և խոչընդոտների հաղթահարման համար մշակված ծրագրերի իրականացման հարցերն, ինչպես նաև պարտականությունները և ներդրումները Բոննի մարտահրավերի նպատակին հասնելու համար:

7. ՁԵՌՔ ԲԵՐՎԱԾ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

Բարձրաստիճան հատվածի հանդիպման ընթացքում կողմերը պայմանավորվեցին.

- սահմանել երկու երկրների դեգրադացված հողային տարածքները և իրականացնել վերականգման ու անտառապատման աշխատանքներ՝ մինչև 2030թ., ինչպես նաև գնահատել ազգային ներուժը անտառների վերականգման հարցում՝ Բոնի մարտահրավերների նպատակներին հասնելու համար,
- անտառային լանդշաֆտների վերականգնման ոլորտում ամրապնդել տարածաշրջանային համագործակցությունը՝ մշակելով միասնական ծրագրեր,
- կոչ անել դոնոր կազմակերպություններին աջակցելու անտառային լանդշաֆտների վերականգմանն ուղղված ծրագրերի իրականացմանը՝ ազգային և տարածաշրջանային ներուժի և ներդրումներ կատարելու միջոցով,
- պարբերաբար իրականացնել Կովկասի և Կենտրոնական Ասիայի անտառային լանդշաֆտների վերականգման մոնիտորինգ:

Բնապահպանության
նախարարի տեղակալ՝

Գնել Սանոսյան